

bari or



Aram Mkrtchyan <ganzak@mail.ru>



Répondre

mar. 07/11/2017 22:20

À :

Armenag HARMANDAYAN (harmandayan.armenag@hotmail.fr);

Karlen Aleksanyan (aleksanyan_karlen@yahoo.com);

Bakour Karapetyan (info@shoushi.am);

beklaryan (beklaryan@mailfrom.ru)

Բարև Արմենակ

Երբ 2014 թ -ին մյուս Արմենակը անցել էր թույլատրելի սահմանը ես իրեն հազար անգամ զգուշացրի և ասացի հետ կանգնիր այդ գործելավորճից, սակայն Տիգանը չգիտես թե ինչու ընդունեց մյուս Արմենակի սուտը ու կեղծիքը, միակ մարդը որ բռնել էր Արմենակի ձեռքը նրան կանգնեցնելու համար ես էի: Եթե կուզես իմանալ ես Արմենակին շատ չեմ մեղադրում ձեզ ընդամենը երկու տախի պահանջվեց, որ հաստատեիք թե ինչ եմ ես արել 2014 ին:

Բայց արդեն սա էլ էականը չէ , այլ էական է այն թե վտարանդի կառավարությունից անջատված այս երկու խմբերը ինչու են հեղինակագրվում բուն պատակը: Ինչու եմ քեզ գրում ,քանի որ դժվար պահին բոլորը փախչում են և ծանրությունը թողնում են քո վրա, ես շատ լավ հիշում եմ թե դու ինչ ես գրել իմ հետ կապված պաշտպանելով մյուս Արմենակին և Տիգրանին :Թեկուզ դա սխալ էր, բայց քո արածը պատասխանատու մարդու արած էր; Հիմա էլ ես դու գրում ինչեպես երկու տարի առաջ իսկ մյուսները թաքնվում են քո գրածի հետևում:

Ես քեզ միշտ ավելի լուրջ եմ գնահատել քան մյուսներին, իմ դիրքորոշումը չի փոխվել ոչ կատարվածի նկատմամբ ոչ էլ անձերի և ոչ էլ քո նկատմամբ: Այն ինչ դուք անում եք ապագա չունի և կապ չունի թե դեռ ինչքան կծգվի ձեր այդ գործելավորճը և ինչ քայլ կանեք:

Արմենակ, հարցի լուծումը մեկն է, վերադառնալ վտարանդի կառավարության ձևաչափ և շարունակել աշխատանքը, մնացած բոլոր ձեր գործողությունները շուտ թե ուշ տանելու են փակուղի:

Վստահ դու տեղյակ ես որ , սեպտեմբեր 23-24 Երևանում միջոցառումացկացրեցինք համահայկական Սենատի ձևավորելու նպատակով այս աշխատանքի մեջ շատ մարդիկ կան որոնց մի մասին դու ճանաչում ես և բոլորն էլ սպասում են թե երբ պիտի նորից գուճի միայն վտարանդի կառավարությունը:

Մեկ ամիս հետո Դեկտեմբերին Երևանում ացկացնելու ենք վտարանդի կառավարության 7 տարվա ամփոփիչ աշխատանքը: Իսկ ամփոփելու շատ բան կա: Առաջարկում եմ մասնակցել այդ աշխատանքին և հանրության ցույց տալ որ ,Արևմտյան Հայստանի հայրենաստիության նպատակը ավելի կարևոր է քան

կանգնած մնալը նույն տեղում ` միջանձնական անձնական հարաբերությունների դաշտում:

Ամեն դեպքում արևելյան մարտարվեստի փիլիսոփայությունը պիտի որ, քեզ օգնի կազմակերպել մյուսներին իրադրությունը ճիշտ գնահատելու և դրական քայլ անելու համար: Հին սխալները պիտի օգնեն նոր որոշումներ կայացնելու ժամանակ նույն հարցի շուրջ չսխալվել:

--

Aram Mkrtchyan